## 29. ՀՈՐԲԱԴԸՂ ԳՅՈՒՂ

*505. ԽԱՉՔԱՐ, գտնվում է գյուղի հյուսիս-արևմտյան կողմում՝ Բաղչաջուղ կոչված ավերակ գյուղատեղու արևմտյան եզրին, գետակի ձախ ափին, քիվին և շրջանակներին, 10 տող.*



ԹՎ. :ՉԽ: (1291). ԱՅՍ ՆՇԱՆ ԿԱ͵Ն͵Գ͵Ն͵Ե͵Ա͵Լ
Ե͵Ի͵ ԱՐՔԱՆ ԱԻԾԵ͵Ա͵Լ ԱՐԵԱՄԲ ԱՆՄԱՀ
ԹԱԳԱՎՈՐԻՆ ՑԻ. ԵԻ . .
ՑԱՂԱԳՍ ԵՐԻՑ . . . :

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Գ, Գրիգորյանից։*

*506. ԽԱՉՔԱՐ, ջարդոտված, ընկած է Հորբադըղ գյուղի եկեղեցու բակում, 4 տող.*



ՍԲ. ⌈ԽԱ⌉Չ⌈Ս⌉ ՀՈԳ-ՈՅ| ԻՄՈՑ|. ԹՎ. :ՊԼԴ: (1385):

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

*507. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած է նախորդի մոտ՝ քիվին, 1 տող.*



ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ԵՂԻՇ͵Ի͵Ն͵:

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

*508. ԽԱՉՔԱՐ, փոքր, նախորդների մոտ, վրան միայն թվականն է նշմարվում.*



Թ͵Վ͵. ՉԿԷ (1318):

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

***509. ԳՑՈՒՂԱՄԻՋԻ ԵԿԵՂԵՑՈՒ** ներսում՝ ավազանի կամարի վրա.*

Շնորհօք ամենազօրին Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ի թուականի մարդեղութեան բանին Աստուծոյ :ՌՈՂԲ:, ի հայկական տումարի :ՌՃԽԱ: (1692) շինեցավ սուրբ եկեղեցիս յանուն սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի.

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ Ե, 298։ Ալիշան, 158։*

***510. ՆՈՒՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ** ավազանի վրա.*

Կանգնեցաւ աւազան սուրբ մկրտութեան հոգւոյ և թողութեան մեղաց . . .

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ Ե, 298։ Ալիշան, 158։*

## 30. ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՑՈՒՂ

***511. ԽԱՉՔԱՐ**, փոքր, ընկած է գյուղի վարելահողերի մեջ, ստորին մասում, 2 տող.*

ԵՍՌՍՔՆԱԿՆԳՆԵՅՅԻՋԻԽԱՉՍԻԲԱՐԵԽԱԻՍԾՆՈՂԱՑ
ԻՄՈՑՎԱՐԴԱԵԻՌՎՍԷՓԱ·ԹՎ·Չ:

ԵՍ ՈՍՔԱՆ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱԻՍ ԾՆՈՂԱՑ| ԻՄՈՑ ՎԱՐԴԱ ԵՒ ՈՎՍԵՓԱ. ԹՎ. :Չ: (1251)

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Հ. Եղիազարյանից։*

## 31. ՀՈՐՍ

*Այս գյուղում պահպանվել են արձանագրություն ունեցող երեք խաչքարեր միայն։ Շատ արժեքավոր է գյուղամիջում պահպանված մի հին բնակելի տուն, որը բաղկացած է եղել երկու մասից՝ բուն տունը և նրա առաջին սրահ։ Վերջինս այժմ ավերակ է, իսկ տունը օգտագործվում է։ Տունը երկարավուն հատակագիծ ունեցող բավական մեծ դահլիճ է. ծածկը կրել են երկու շարքի փայտե սյուները, որոնց լավ մշակված քարե պատվանդանները մնում են տեղում։ Դահլիճի մի ծայրը բարձր է բեմի նման. հյուսիսային պատի մեջ կա խարույկ (բուխարի) և պատերին մի քանի պատրհաններ։ Մուտքը հարավային պատի մեջ է և լավ ձևավորված։*

*Տեղական ավանդությունն այս տունը համարում է Ջհոար Օրբելյանի դարպասը (ապարանքը)․ արձանագրությունների մեջ ևս թե Ջեսարի անունը կա և թե նրա կնոջ՝ Խորիշահի։ Բոլոր դեպքերում տունը XIII—XIV դդ. քաղաքացիական ճարտարապետության լավագույն նմուշ է։*

*Հորս գյուղը հիշատակված է Ս. Օրբելյանի ցուցակի մեջ, 12 չափ հարկով, որից երևում է, որ մեծ գյուղերից մեկն է եղել։*

***512. ԽԱՉՔԱՐ**, գտնվում է գյուղի մեջ, մի բակում, ընկած պատվանդանի մոտ. ստորին մասում, 5 տող.*

ԹՎ ՉՂԸ
ԻՇԽ ԱՆՈՒ
ԹԲ ՊԱՐՉԷՍԱՐԻՆԵՍՄ
ԻՐԻԿԱԿՆԵՑԻԶԻՆԱՍՓԿ
ՈՒԹԻՀՈԳՈՅԻՄ ՈՄ

ԹՎ. :ՉՂԸ: (1349)| ԻՇԽԱՆՈՒ|ԹԲ. ՊԱՐՈՆ ՉԷՍԱՐԻՆ. ԵՍ Տ|ԻՐԻ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿ|ՈՒԹԻ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ:

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879 № 1, 108։ Ալիշան, 181։*

Լուսանկ. 190